— Մենք ծածուկ կը փախչինք կ'երթանք:

— Քեզի հետ ամէն տեղ կ'երթամ, Զաւէն հայրիկ, բայց դու այսչափ ատեն ինչո՞ւ զիս մոռցար:

— Խե՜ղճ աղջիկ, քանի տարի է, որ զքեզ կը փնտրեմ եւ դեռ նոր գտայ:

— Երթանք ուրեմն,— ըսաւ տղան եւ ոտք ելաւ:

— Հիմա դեռ պատրաստ չենք, դու մեր այս խօսքերը պէտք չէ, որ մարդու յայտնես. դու զիս ճանչելդ, իմ անունս մարդու պէտք չէ իմացնես. ես գաղտուկ ամէն բան կը պատրաստեմ, կարգի կը դնեմ. եւ օր մը յանկարծ կ'երթանք քեզ հետ մայրիկին:

— Մայրիկն ուրեմն ո՞ղջ է,— ըսաւ Արփենի եւ աչքերուն արտաքոյ կարգի կենդանութիւն մը եկաւ:

— Նուրբերը ողջ են միշտ, իմ սիրուն Արփենի:

— Արփենի այս խօսքին զօրութիւնը չիմացաւ, եւ ծերուն ձեռքը բռնելով.

— Շուտ տես պատրաստութիւններդ, Զաւէն հայրիկ,— ըսաւ:

— Դու համբերէ. երբեմն եկ հոս այսպիսի ժամանակ, երբ ամէնքը քձնած են. կը տեսնուինք եւ կը խօսինք: Միայն մի՛ մոռնար, որ մարդ պէտք չէ իմանայ:

— Դու երեխա՞յ ես:

— Լաւ՛,— ըսաւ ծերը ծիծաղելով այս հարցմունքին,— գնա՛, որդեակ, ոչ ոք կասկած չառնու:

Եւ աղջիկը «մնաս բարով» զրուցեց ու մտաւ տուն: Իսկ Զաւէն կը նայեր ետեւեն եւ կը մտածէր ու կ'ըսէր ինքնիրեն. «Ի՞նչ վիճակ է ալս աղջկան վիճակը, ինչո՞ւ ալդ փոփոխութիւնը իւր վրայ, ես կարծեի թէ զիս տեսնելուն ու Կանչելուն ինձ պիտի դիմէ՝ գիրկս պիտի ընկնի… «Զաւէն հայրիկ» ըսաւ. բայց այն հին ոգին, հին եռանդը թուի թէ կասկածը, գերութիւնը, բռնութիւնը սպաննէր են: Այնպէս թուի, որ եթէ ազատութեան հասնելու փափագը չէ մեռած, յոյս եւ հաւատք գրեթէ մեռէր են լուր փոքրիկ սրտին մէջ… Այո՛, ալդ ճիւաղները փրկութեան յոյսը սպաննէր են սրտին մէջ: Հայաստան քանդեր խլէր են իր սրտեն: Տէր